

Ա. Ի. ՄԻՆԱՍՅԱՆ

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԶՐԵՐԻՑ ԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱԳՐՈՒՆՏՆԵՐԻ
ՆԵԽՄԱՆ ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԸ

ՍԱԿԱՆՈՒՄ ԵՅԻ ՀՐԱՄԱՆ ՊԱՇԱՐԻՆ ԵՐԻ օԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՏԽԱՆՔՈՎ
ԵՅԻ ՀՐԻց ազատված տասնյակ հազարավոր հեկտար հողագրունտ-
ՆԵՐԻ յուրացումն ու մշակումը խոշոր նշանակություն ունի մեր ռես-
պուբլիկայի ժողովրդական տնտեսության համար։ Այդ հողա-
գրունտների յուրացումը պահանջում է բազմակողմանի կերպով
ուսումնասիրել նրանց ֆիզիկո-քիմիական ու բիոլոգիական հատ-
կությունները և արտադրողականության բարձրացման ուղիներ։

Բայ Վ. Ռ. Վիլյամսի (1949), հողն ստեղծվում և կազմակոր-
վում է որպես միկրորգանիզմներով ապրող էակ: Այստեղից էլ
ակնհայտ է դառնում նոր ազատված հողագրութեաներում զարգա-
ցող միկրորգանիզմների և նրանց կենսագործունեության հետևան-
քով ընթացող միկրոբիոլոգիական պրոցեսների զարգացման դինա-
միկայի առանձնահատկությունների պարզաբանման կարևորությու-
նը, ինչպես և այդ հողագրութեանների բնութագրման, նրանց բեր-
րիության բարձրացման և օգտագործման հարցի կարգակորումը:

Այդ պրոցեսներից կարևոր նշանակություն ունի ամռնիքիկացիան: Հողում գտնվող մի շարք աղոտային միացություններ, շնորհիվ ամռնիքիկացիայի, հաջորդաբար ենթարկվում են հիգրոլիկի, որի վերջնական արդյունքը հանդիսանում է ամրիակի առաջացումը:

Ուսումնասիրության օբյեկտ հանդիսացել են Սևանի շրջանի Ցամաքաբերդ, Լճաշեն, Ն. Բայազետի շրջանի Գեղարքունի, Մարտունու շրջանի Զոլաքար և Ն. Ալուշալու գյուղերի 1944 և 1948 թթ. լճի ջրից ազատված միջին և ուժեղ կմախքային, ավազային և փուլսի ավաղային հողագրունտները: Այդ տիպի հողագրունտները ընտրել ենք, ելակետ ունենալով այն, որ մինչև այժմ լճի ջրից ազատված տարածությունները հիմնականում բաղկացած են վերը նշված տիպերից:

Լճի ջրից ազատված հողագրումաներն ըստ մորֆոլոգիական
բնույթի հիմնականում ենքայացնում են՝ սարուկտուրալուրկ,

մոխրագույն և բաց մոխրագույն, երբեմն շրիմուռների մնացորդներով հագեցած և ազոտային միացություններով աղքատ մասսա: Լճի մերձափնյա ավազալին հողագրունտների մեխանիկական կաղմի ուսումնասիրությունը ցուց է տալիս, որ նրանք, փոքր տարրերությամբ, համարյա միանման ֆրակցիաներից են բաղկացած: Զրի ալեկոծության պրոցեսների շնորհիվ գրունտների ավելի մասնիկները տեղափոխվել են ջրավազանի ավելի խորը մասը, իսկ ավելի խոշոր մասնիկները մնացել են զրի ափին աղքատված տարածություններում կոստակված: Լճի շրերի մակարդակի իջեցման զուգընթաց իջնում են նաև գրունտային շրերը: Հողագրունտներն առհասարակ ալքատ են բոսականությամբ, նրանց վրա եղած տեսակների թիվը շատ սահմանափակ է, ընդ որում նոր աղքատված հողագրունտներում բոսականությունն ավելի աղքատ է, քան վաղ ժամանակում աղքատված տարածություններում:

Ուսումնասիրությունները ցուց են ավել, որ վերը նշված պայմանների շնորհիվ սկզբնական ջրաշնուր հողագրունտները աղքատ միկրոֆլորա ունեն, նրանցում բիոքիմիական և միկրոբիոլոգիական պրոցեսներն էլ ընթանում են ավելի թուլ, իսկ հետագա տարիների ընթացքում, հողակագման պրոցեսների և արտաքին այլ պայմանների բարելավման շնորհիվ՝ միկրոբիոլոգիական պրոցեսներն աստիճանաբար ինտենսիվանում են:

Ուսումնասիրության ընթացքում հատկապես ուշագրություն ենք դարձել հաշվի առել նեխսման բակտերիաներից՝ Bac. mycoides, Bac. mesentericus, Bac. subtilis և Bac. meghaterium տեսակները: Նեխսման բակտերիաները հողագրունտների շրից աղքատվելու առաջին տարրում օրգանական նյութերի աղքատության և արտաքին միջավայրի անբարենպաստ պայմանների շնորհիվ անհամեմատ քիչ են, քան զրից աղքատվելու հետագա տարիներում: Այդ երկում է 1948 թ. զրից աղքատված հողագրունտներում նույն տարրում նրանց քանակի հաշվառման տվյալներից, որոնք ամփոփված են աղյուսակի 1-ում:

Աղյուսակի թվերից երկում է, որ նեխսման վերոհիշյալ բակտերիաների քանակը հողագրունտների աղքատման առաջին տարրում փոքր է, նրանց ընդհանուր քանակը և առանձին տեսակների քանակը տարբեր տիպի հողագրունտներում տարբեր է: Ամուսնը նըրանց քանակը մեծ է Գեղարքունիքում գյուղի հողագրունտներում, իսկ աշնանը՝ լճաշենի և Զորագարի հողագրունտներում: Նեխսման բակտերիաներից Bac. mycoides, Bac. mesentericus, Bac. subtilis

և Bac. meghaterium տեսակները համեմատաբար շատ են էճաշենի հողագրումտներում։ Առաջին տարում, սեզոնային փոփոխության տեսակեաից, նեխման բակտերիաների քանակի մեջ որևէ օրինաշափություն չկա, սակայն, ինչպես հետագայում կտեսնենք, տարեցտարի նրանց քանակն ընդհանրապես մեծանում է։ Էճի ջրից նոր աղաւ-

Աղաւակի 1

Նեխման բակտերիաների ընդհանուր քանակը 1 գ հողագրումտներում
միլիլոններով (մասպեպտոն աղար սննդանյութի վրա)

Հողագրումտները	Բակտերիաների ընդհանուր թիվը		Bac. mycoides, Bac. mesentericus, Bac. subtilis & Bac. meghaterium-ի թիվը		
	ամ- սանը	աշ- նանը	ամսանը	աշնանը	
Ցամաքարերգ	Միջին կմախքային, ավաղային	1,69	1,45	0,006	0,003
Էճաշեն	Թույլ կմախքային, փուխը ավաղային	1,46	5,20	0,012	0,003
Գեղարքունիք	Թույլ կմախքային, փուխը ավաղային	3,06	1,02	0,002	0,004
Զոլաբար	Ուժեղ կմախքային, ավաղային	0,94	4,33	0,006	0,004
Ն. Արտչալու	Թույլ կմախքային, փուխը ավաղային	1,68	1,57	0,002	0,002

ված հողագրումտներում նեխման բակտերիաների քանակը համեմատաբար ավելի փոքր է, քան այդ հողագրումտներին կից կուլտուրական շաղանակագույն սևահողերում։ Այսպիս, օրինակ, եթե նեխման բակտերիաների նշված տեսակների թիվը հողագրումտներում կազմում է 2—12 հազար, ապա այդ հողագրումտներին մոտ գտնվող Մարտունու շրջանի Աստղաձոր գյուղի կուլտուրական շաղանակագույն սևահողերում, ինչպես ցուց է տալիս Հ. Կ. Փանոսյանի և ուղիշների (1951) ոսումնամիբությունը, կազմում է 1,41—4,1 միլիոն։ Սա բացատրվում է նրանով, որ հողագրումտների ֆիզիկաքիական կազմն սկզբնական շրջանում աննպաստ է և աղու պարունակող օրգանական նյութերն էլ շատ քիչ են։

Մեր ոսումնամիբություններից պարզվեց, որ հողագրումտներում միջավայրի փոփոխության զուգընթաց փոփոխվում է նաև

նեխման բակտերիաների քանակը: Լճաշենի, Գեղարքունու և Ն. Ալուչալուի թուլ կմախբային, փուփր ավազային հողագրունտներում, ազդու պարունակող օրգանական նյութերի քշության, հողակազման թուլ տարածման և արտաքին այլ պայմանների դառնդաղ բարելավման հետեանքով, հետագա սարիներում, ինչպես նոր, այնպես էլ ավելի լազ ժամանակներում ազատված տարածություններում նեխման բակտերիաներն աննշան շափով են ավելանում, իսկ որոշ դեպքերում նույնիսկ նվազման դեպքեր են նկատվում: Այդ երկում է աղյուսակ 2-ում բերված տվյալներից:

Աղյուսակ 2

Թուլ կմախբային, փուխր ավազային հողագրունտներում նեխման բակտերիաների ընդհանուր քանակն ըստ տարիների (մասակնազո՞ն ազար սննդանյութի գրա 1 գ հողագրունտում՝ միլիոններով)

կայրը	հողագրունտները		1948 թ.		1949 թ.		1950 թ.	
	ազատ-ման տարեթիվը	ամ-սանը	աշ-նանը	դար-նանը	ամ-սանը	աշ-նանը	դար-նանը	ամ-սանը
Լճաշեն	1948	1,46	5,20	0,31	1,67	0,26	0,52	0,83
	1944	1,92	0,92	0,84	3,03	0,63	0,90	5,24
Գեղարքունիք	1948	3,06	1,02	0,48	6,42	2,96	0,68	1,85
	1944	1,09	3,41	0,78	3,98	1,50	1,40	2,41
Ն. Ալուչալու	1948	1,68	1,57	0,34	1,59	0,43	2,92	9,27
	1944	1,11	5,56	1,23	2,49	3,32	0,96	3,82
								1,70

Աղյուսակի թվերից երկում է, որ եթե Լճաշեն գյուղի թուլ կմախբային, փուփր ավազային 1948 թ. ազատված 1 գ հողագրունտում 1948 թ. ամռանը կար 1,46 միլիոն նեխման բակտերիա, ապա 1949 թ. ամռանը նրանց թիվը հազիվ հասնում էր 1,67 միլիոնի, իսկ 1950 թ. ամռանը, ընդհակառակը, նվազելով հասել էր 0,83 միլիոնի: Աշնանը նրանց թիվը նույնպես աստիճանաբար նվազում է: այսպես, օրինակ, եթե 1948 թ. աշնանը նրանց թիվը եղել է 5,20 միլիոն, ապա 1950 թ. աշնանը արդեն կազմում էր 0,06 միլիոն: 1944 թ. ազատված հողագրունտներում ամռանը նեխման բակտերիաներն աստիճանաբար ավելանում են, սակայն աշնան սեղուներին նորից պակասում են: Մոտավորապես նույն պատկերն ունեն Գեղարքունիք և Ն. Ալուչալու գյուղերի հողագրունտների նեխման բակտերիաների քանակական փոփոխությունները:

Այլ պատկեր է ներկայացնում նեխման բակտերիաների հետագա տարիների աճի դինամիկան Ցամաքաբերդի և Զոլաքարի տարբեր ժամանակներում աղատված ուժեղ կմախքային, ավազային հողագրումաներում: Այսուեղ, համեմատած հնաշենի, Գեղարքունուկ և ն: Ալուզալուկի թուզը կմախքային, փուլոր ավազային հողագրումաների հետ, նեխման բակտերիաների քանակը մեծ է և հետագա տարիներում աստիճանաբար է՛լ ավելի է մեծանում: Այդ պարզ երևում է աղյուսակ 3-ի տվյալներից:

Աղյուսակ 3:

Տարբեր ժամանակներում աղատված ուժեղ կմախքային, ավազային հողագրումաներում նեխման բակտերիաների ընդհանուր քանակն ըստ տարիների (ժամապելտոն աղար աննդանյութի վրա
1 գ հողագրումանում՝ միլիոններով)

Հողագրումաները	1948 թ.		1949 թ.		1950 թ.	
	աղատված ման տարբերիչը	մթացող մակարդակը	աղատված ման տարբերիչը	մթացող մակարդակը	աղատված ման տարբերիչը	մթացող մակարդակը
Ցամաքաբերդ	1948	1,69	1,45	1,46	5,04	9,65
	1944	5,56	2,13	1,66	6,36	9,94
Զոլաքար	1948	0,94	4,33	0,86	8,56	7,22
	1944	7,54	8,88	6,28	10,63	7,28

Աղյուսակի թվերից երևում է, որ Ցամաքաբերդ և Զոլաքար գյուղերի 1944 և 1948 թթ. աղատված ուժեղ կմախքային, ավազային հողագրումաներում հետագա տարիներում աստիճանաբար ավելանում է նեխման բակտերիաների քանակը, ընդ որում ավելի վաղ ժամանակներում (1944) աղատված հողագրումաներում նրանց քանակը ավելի մեծ է: Այսպես, օրինակ, եթե Ցամաքաբերդ գյուղի 1944 թ. աղատված 1 գ հողագրումանում 1948 թ. աշնանը կար 2,13 միլիոն նեխման բակտերիա, ապա 1949 թ. աշնանը կար 9,94 միլիոն, իսկ 1950 թ. աշնանը՝ 11,95 միլիոն: Նույն հողագրումանում 1948 թ. աղատված տարածություններում համապատասխան թվերը կազմում են՝ 1,45 միլիոն, 9,65 միլիոն և 10,33 միլիոն: Նույնը կարելի է ասել Զոլաքար գյուղի հողագրումանում նեխման բակտերիաների քանակի փոփոխությունների մասին: Թուզը կմախքային, փուլոր ավազային և ուժեղ կմախքային, ավազային հողագրումաներում զարգացող նեխման բակտերիաների վերը բերված քանակական տարբերությունները բացատրվում են նրանով, որ

վերջիններում, առաջինների հետ համեմատած, այս բակտերիաների աճի համար կան նպաստավոր պայմաններ: Ալստեն՝ Ցամաքաբերդի և Զոլաբարի հողագրունտներում բուսականությունը հարուստ է, հողակազմման պրոցեսներն անհամեմատ լավ են ընթանում, հողագրունտների երեսին 6—7 տարվա ընթացքում դոյշեցել է 15—17 սմ հաստությամբ ձմեռակալած շերտ: Խոնավությունը բարձր է և նրանցում, համեմատած թույլ կմախքային, փոփոխավազային հողագրունտների հետ, ազոս ուղարունակող օրդանական սյունթերը շատ են: Դրանում համոզվելու համար աղուսակ 4-ում բերում ենք նշված հողագրունտներում հումուսի կուտակմանը վերաբերող մեր ուսումնասիրության տվյալները:

Աղյուսակ 4

Հողագրունտների վերին շերտում հումուսի կուտակման ընթացքը ըստ տարիների ամսանը (հումուսը 0/0-ներով)

Հողագրունտները		աղատա- ման տա- րեթյունը	1948 թ.	1949 թ.	1950 թ.
Վայրը	Բնույթը				
Զոլաբար	Ուժեղ կմախքա- յին, ավազային	1948	0,74	1,45	1,56
		1944	1,25	1,61	1,86
Ցամաքաբերդ	*	1948	0,37	1,10	1,00
		1944	0,75	1,15	1,27
Գեղաբերունի	Թույլ կմախքային, փուխտ ավազային	1948	0,34	0,44	0,62
		1944	0,30	0,46	0,72
Լճաշեն	*	1948	0,42	0,88	1,00
		1944	0,75	1,10	1,39
Ն. Ալուչալու	*	1948	1,14	0,44	0,70
		1944	0,65	1,02	1,10

Աղյուսակի թվերից պարզ երևում է, որ Զոլաբարի և Ցամաքաբերդի ուժեղ կմախքային, ավազային, բուսականությամբ ծածկված հողագրունտներում հումուսի քանակն ավելի մեծ է, քան Գեղաբերունի, Լճաշենի և Ն. Ալուչալու փուականից հողագրունտներում:

* *

Բազմաթիվ հետազոտություններից [Ա. Ա. Իմշենեցկի (1940), Ե. Ն. Միջուատին (1947), Գ. Մ. Բոշյան (1950), Վ. Լ. Օմելյանսկի (1915), Մ. Վ. Ֆլոդորով (1948) և ուրիշներ] հայտնի է, որ միկրօրգանիզմների մորֆոլոգիական և ֆիզիոլոգիական հատկանիշներն արտաքին պայմանների բարելավման կամ վատացման հետևանքով ենթարկվում են որոշակի փոփոխությունների: Մեր ուսումնա-

սիրությունները ցուց են տվել, որ Սևանա լճի ջրից աղաւաված Հողագրումտներում, նեխման բակտերիաների մորֆոլոգիական հատկանիշները, Հողագրումտների ֆիզիկո-քիմիական կազմի և արտաքին միջավայրի այլ պայմանների բարելավման զուգընթաց, նույնպես ենթարկվում են որոշակի ձևափոխությունների: Ջրից նոր աղաւաված Հողագրումտներում նեխման բակտերիաների մեծ մասը կարծ ձողիկներ և հարթ մակերեսով փայլուն գաղութներ տվուի Bac. subtillis-ներ են հանդիսանում: Հետագա տարիների ընթացքում, նույն Հողագրումտներում Bac. subtillis -ների ձևերն աստիճանաբար փոփոխում են. նրանք զառնում են ավելի երկարավագան: Հաճախ սպորավորվող ձողիկներ. վերջին դեպքում Bac. subtillis-ներին զուգընթաց զարգանում են նաև Bac. mesentericus-ների և Bac. megatherium -ների գաղութների ձևեր առաջացնող բակտերիաներ. Հետաքրքիրն այն է, որ այդ նեխման բակտերիաների խոռոչը տվյալ Հողային պայմաններում ավելի բազմազան է հատկապես թիթեռնածակավոր բույսերի և հացազգի խոտախառնուրդների ոփողոսթերայում. ընդհակառակը, միայն հացազգիներով, այն էլ աղքատ բուականությամբ զբաղեցված Հողագրումտներում նրանք քիչ են և միատարր (նկ. 1, 2, 3, 4):

Հողագրումտներում ամոնիֆիկատորների (նեխման բակտերիաների) առկայությունն ինքնին աղացուց է, որ նրանցում տեղի է ունենում ազոտային միացությունների դեղամինիզացիա, որն իր արտացըլում է գտնում ամոնիֆիկացիայի պրոցեսի ընթացքի մեջ: Հայտնի է, որ սպիտակուցների ամոնիֆիկացիայի ինտենսիվությունը կախված է նաև ինչպես սպիտակուցային նյութերի և անաղուածինային միացությունների քանակից, այնպես էլ նրանց քանակական փոխհարաբերություններից: Այստեղ վճռական նշանակություն ունեն նաև արտաքին պայմանները, որոնք չեն ցուց աղաւաված Հողագրումտներում տարեցտարի նպաստավոր են դառնում միկրոբների զարգացման համար: Դրան զուգընթաց Հողագրումտներում ամոնիֆիկացիայի պրոցեսը հետպհետեւ ինտենսիվանում է: Նկատի ունենալով, որ Հողում ամոնիֆիկացիայից առաջացած ամիակի հաշվառման համար Ռեմի-Լյոնիսի (1920*) և Վարսմանի (1934*) մեթոդները ունեն զգալի թերություններ, մենք մեր ուսումնասիրության ընթացքում ամիակը որոշել ենք Հ. Կ. Փանոսյանի (1944) մեթոդով: Այդ մեթոդով միանգամայն հնարա-

* Բառ չ. կ. Փանոսյանի (1947):

վոր է ամոնիֆիկացիայի պրոցեսի ինտենսիվությունը հետազոտել հենց հողում, թե՛ աերոր և թե՛ անաերոր պայմաններում, ինչպես և հնարավոր է ձշությամբ հաշվի առնել ցնդող, կլանված և հողում նիտրատների վերածված ամիակն առանց կորստի: Ուսումնասիրություններից պարզվեց, որ հողագրումտների ազատման առաջին տարրում ամոնիֆիկացիան ընթանում է թուլ ինտենսիվությամբ, որովհետև այստեղ մենք գործ ունենք հողագրումտների նախնական վիճակի հետ, որտեղ հողագրումտների ֆիզիկո-քիմիական վիճակը և զերմային ռեժիմը սկզբում անբարենպաստ են հիշյալ պրոցեսի համար: Թե ինչպիսի ինտենսիվությամբ է ընթանում ամոնիֆիկացիան հողագրումտում զրից ազատվելու առաջին տարրում, այդ ցուց են տալիս աղյուսակ 5-ում բերված թվերը:

Աղյուսակ 5


100 գ հողագրումտում 1 գ պետոնի քայլայումից առաջացած ամիակի քանակը մգ-ներով

Հողագրումտների վայրը և բնույթը	Ամուանը	Աշնանը
Ցամաքաբերդ—Միջին կմախքային, ավազային Լճաշեն-թուլ կմախքային, փուխր ավազային	74,71 75,19	86,70 89,10
Գեղարքունիք-թուլ կմախքային, փուխր ավազային	60,56	92,79
Զոլաքաբ-ուժեղ կմախքային, ավազային Ն. Ալուշալու-թուլ կմախքային, փուխր ավազային	76,43 64,57	94,45 89,65


Աղյուսակի թվերից երևում է, որ նոր ազատված հողագրումտներում ամոնիֆիկացիան աշնանը ավելի ինտենսիվ է ընթանում, քան ամուանը: Զնայած առանձին հողագրումտների նեխման բակտերիաների մեջ քանակական զգալի տարբերություններ են նկատվում, սակայն նրանցում տեղի ունեցող ամոնիֆիկացիայի պրոցեսների միջև այդ տարբերությունները համեմատաբար փոքր են: Այսպես, օրինակ, իթե Գեղարքունու թուլ կմախքային, փուխր ավազային 1 գ հողագրումտում նեխման բակտերիաների թիվը կազմում է 3,06 միլիոն և նրանց կենսագործունեության ընթացքում առաջանում է 60,56 մգ ամիակ, ապա Զոլաքաբի ուժեղ կմախքային, ավազային 1 գ հողագրումտի 0,94 միլիոն նեխման բակտերիաների առկայությամբ 1 գ պետոնի քայլայումից առաջանում է 76,43 մգ ամիակ, իսկ Ցամաքաբերդի միջին կմախքային ավազային 1 գ հողագրումտի 1,69 միլիոն նեխման բակտերիաների առկայության գեպքում՝ 74,71 մգ ամիակ: Ինչպես տեսնում ենք,




Նկ. 1. Երեքնուկով և հացաղղիներով զբաղեցված
հողագրունտների նեխման բակտերիաները:



Նկ. 2. Երեքնուկով զբաղեցված հողագրունտների
նեխման բակտերիաները:



Նկ. 3. Հացաղղիներով զբաղեցված հողագրունտ-ների նեխման բակտերիաները:



Նկ. 4. Առանց բուսականության հողագրունտների նեխման բակտերիաները:

ամունիքի կացիայի ինտենսիվությունը կախված է ոչ միայն միկ-
տորպանիզմների քանակից, այլև առանձին ամունիքի կատորների
հաջող կենսագործունեությունից: Այստեղ, անշուշտ, որոշ նշանա-
լություն ունեն նաև միկրոօրգանիզմների ֆիզիոլոգիական ու մոր-
լուգիական առանձնահատկությունները, որոնք նույնպես փոխ-
ում են միջավայրի արտաքին պայմանների փոփոխության հե-
ռանքով: Եթե նոր աղատված հողագրունտներում ընթացող ամու-
նիքի կացիայի տվյալները համեմատելու մինենք Սևանի ավազանի
աղանակագույն սևահողերում ընթացող ամունիքի կացիայի տվյալ-
ների հետ, ապա կտեսնենք, որ հողագրունտներում ամունիքի կա-
ցիան նկատելի կերպով թույլ է ընթանում: Այդ երեսում է աղյուսակ
ում բերված տվյալներից:

Աղյուսակ 6

100 գ հողում 1 գ պեղառնի քայլքայումից առ աջացած ամիակի քանակը
մգ-ներով (շագանակագույն սևահողում և նոր
աղատված հողագրունտներում)

Հողերի և հողագրունտների բնույթը	Առաջացած ամիակը մգ-ներով
Հաղանակագույն սևահող՝ զրազեցված կորնդանով	91,94
Հաղանակագույն սևահող՝ զրազեցված կարտոֆիլով	94,55
Մաղանակագույն սևահող՝ զրազեցված աշնանացան ցորենով	101,13
Միջին կմախքային, ավազային հողագրունտներ	74,19
Թույլ կմախքային, փութր ավազային հողագրունտներ	60,56
Ուժեղ կմախքային, ավազային հողագրունտներ	76,43

Տարբեր հողագրունտներում, ջրից աղատվելու հետագա տա-
րիների ընթացքում ամունիքի կացիայի պրոցեսը աստիճանաբար ին-
տենսիվացնում է: Նկատվում է, որ ավելի վաղ աղատված (1944)
տարբեր տիպի հողագրունտներում այդ պրոցեսն ավելի ինտենսիվ
է ընթանում, քան ավելի ուշ (1948) աղատված հողագրունտներում:
Բացի այդ, ամունիքի կացիայի պրոցեսը ենթարկվում է նաև սեզո-
նալին փոփոխությունների: Այդ կապակցությամբ կատարված
ուսումնասիրությունների թվական տվյալները բերված են աղյու-
սակ 7-ում:

Այդ աղյուսակի թվերից երեսում է, որ եթե Ցամաքաբերդ գյու-
ղի միջին կմախքային, ավազային հողագրունտում 1948 թ. 1 գ
պեղառնի քայլքայումից առաջացել է 86,79 մգ ամիակ, ապա նույն
հողագրունտում 1950 թ. աշնանը առաջացել է 111,35 մգ ամիակ:
Լճաշեն գյուղի թույլ կմախքային, փոփոխ ավազային հողագրուն-
տում թվերը համապատասխանաբար կազմում են՝ 75,19 մգ և

կառավար

ମୁଦ୍ରଣ କାର୍ଯ୍ୟକ୍ରମ ପତ୍ର ପାଇଁ ଏହାର ପରିଚୟ ଓ ଉପରେ ଲଙ୍ଘନ କରିବାକୁ ଅନୁରୋଧ କରିଛି ।

Հաղողականություններ		1948 թ.		1949 թ.		1950 թ.	
Վայրը	Բնույթը	Աղասիանի մասինիւլութ	Աղասիանի մասինիւլութ	Աղասիանի մասինիւլութ	Աղասիանի մասինիւլութ	Աղասիանի մասինիւլութ	Աղասիանի մասինիւլութ
$\theta_{\text{ամագամ-}} \\ \rho_{\text{երդ}}$	$U\ell^2\eta\bar{\nu}$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$	1948 1944	74,71 77,54	86,79 108,17	99,53 90,00	75,80 76,20	108,58 101,53
	$\theta_{\text{ամագամ-}} \\ \rho_{\text{երդ}}$	1948 1944	75,19 83,07	86,87 88,52	92,0 94,30	97,26 105,10	111,53 110,57
$\delta_{\text{ամագամ-}} \\ \rho_{\text{երդ}}$	$\theta_{\text{ուլ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\theta_{\text{ուլ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$	1948 1944	75,19 83,07	86,87 88,52	92,0 94,30	97,26 105,10	107,10
	$\theta_{\text{ուլ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$	1948 1944	75,19 83,07	86,87 88,52	92,0 94,30	97,26 105,10	107,10
$\eta_{\text{ամագամ-}} \\ \rho_{\text{երդ}}$	$\theta_{\text{ուլ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\theta_{\text{ուլ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$	1948 1944	60,56 77,65	92,79 95,56	91,30 102,68	95,90 92,50	102,00 108,75
	$\theta_{\text{ուլ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$	1948 1944	60,56 77,65	92,79 95,56	91,30 102,68	95,90 92,50	102,00 110,50
$\eta_{\text{ամագամ-}} \\ \rho_{\text{երդ}}$	$\theta_{\text{ուլ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\theta_{\text{ուլ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$	1948 1944	76,43 85,15	94,45 97,52	101,50 105,62	102,30 103,50	102,95 105,81
	$\theta_{\text{ուլ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$	1948 1944	76,43 85,15	94,45 97,52	101,50 105,62	102,30 103,50	102,95 108,80
$\alpha_{\text{ուլ}}\eta$	$\theta_{\text{ուլ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\theta_{\text{ուլ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$	1948 1944	74,57 75,46	89,65 91,33	104,34 99,62	97,20 93,60	98,92 97,49
	$\theta_{\text{ուլ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$	1948 1944	74,57 75,46	89,65 91,33	104,34 99,62	97,20 93,60	98,92 97,49
$\zeta_{\text{ուլ}}\cdot U_{\text{ուլ}}\omega_{\text{ուլ}}$	$\theta_{\text{ուլ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\theta_{\text{ուլ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$ $\eta_{\text{աճ}}\eta$	1948 1944	74,57 75,46	89,65 91,33	104,34 99,62	97,20 93,60	98,92 97,49

102,00 մգ, Զոլաքար գյուղի ուժեղ կմախքային, ավազալին հողագրունտով՝ 76,43 մգ և 108,80 մգ և այլն։ Տարբեր ժամանակներում աղատված Հողագրունտներում ամոնիֆիկացիայի ինտենսիվության տարբերությունը նույնպես նկատելի է. այսպես, օրինակ, եթե Լճաշեն գյուղի 1944 թ. թույլ կմախքային, փուփր ավազալին Հողագրունտով 1 գ պեղատոնի քայլայումից 1948 թ. աշնանը՝ 105,10 մգ ամիակ, իսկ 1950 թ. աշնանը՝ 110,50 մգ ամիակ, ապա այդ հողագրունտների 1948 թ. աղատված տարածություններում նույն ժամանակներում առաջացած ամիակի համապատասխան թվերը կազմում են՝ 80,10 մգ, 79,26 մգ և 102,00 մգ։ Մոտավորապես նույնանման փոփոխություններ են նկատվում նաև մյուս հողագրունտներում։ Աղյուսակում բերված թվերից միաժամանակ երևում է, որ ամոնիֆիկացիայի ընթացքը ենթարկվում է նաև սեղոնային փոփոխությունների։ Նկատելի է, որ ամոնիֆիկացիայի պրոցեսը աշնան սեղոններին ինտենսիվ է ընթանում, քան ամռանը. այսպես, օրինակ, եթե Ցամաքաբերդ գյուղի 1948 թ. աղատված միջին կմախքային, ավազային հողագրունտով 1950 թ. աշնանը 1 գ պեղատոնի քայլայումից առաջացել է 111,35 մգ ամիակ, ապա ամռանը առաջացել է 101,53 մգ, եթե Գեղարքունի գյուղի 1944 թ. աղատված թույլ կմախքային, փուփր ավազային հողագրունտով 1 գ պեղատոնի քայլայումից առաջացած ամիակը, 1950 թ. աշնանը կազմում էր 108,80 մգ ամռանը կազմում էր 99,30 մգ և այլն։

Ամոնիֆիկացիայի ինտենսիվությունը մեծապես կախված լինելով նեխման բակտերիաների քանակից, միաժամանակ կախված է նաև նրանց կենսագործունեության ակտիվությունից, իսկ այս վերջինս էլ՝ միջավայրի արտաքին բարենպաստ պայմանների ազդեցությունից։ Այդ պատճառով էլ, եթե նեխման բակտերիաների քանակական փոփոխությունները համեմատելու լինենք ամոնիֆիկացիայի պրոցեսի ընթացքի փոփոխությունների հետ, կնկատենք, որ ամոնիֆիկացիայի ինտենսիվության բարձրացումը ոչ բոլոր դեպքերումն է համընկնում նեխման բակտերիաների քանակի ավելացման հետ։ Այդ պարզ երևում է Զոլաքար գյուղի ուժեղ կմախքային, ավազային, բուսականությամբ հարուստ հողագրունտներում ամոնիֆիկացիայից առաջացած ամիակի և նեխման բակտերիաների զարգացման համեմատական փոփոխություններից (աղյուսակ 8)։

ամռա- նը	աշնա- նը	1948 թ.		1949 թ.		1950 թ.	
		գար- նանը	ամռա- նը	աշնա- նը	գար- նանը	ամռա- նը	աշնա- նը
Նեխման բակտե- րիաները միկրո- ներով	9,96	4,33	8,56	8,56	7,22	4,08	8,62
Ամռաբիկ ացիալից առաջացած ամիա- կր սպ-ներով	76,43	94,45	97,75	101,50	102,30	103,92	102,37

Այս համեմատական փոփոխություններն ավելի ակնառու կեր-
պով երևում են էջ 67-ի դիագրամից:


* * *

Վ. Ռ. Վիլամսի (1951), S. Դ. Լիսենկոյի (1950), Վ. Լ. Օմել-
յանսկու (1914), Ն. Ա. Կրասիլնիկովի (1936, 1940, 1944), Ա. Ա.
Խակովայի (1934, 1940), Ե. Ն. Միջուատինի (1942), Ե. Փ. Բերյո-
զովայի (1951), S. S. Դեմիդենկոյի (1929), Վ. Ն. Բերեսնևայի և
Ե. Վ. Զեմողանովայի (1951), Լ. Մ. Դորոսինսկու (1951), Վ. Ի.
Ռուդակովի (1951) և ուղիւ շատերի ուսումնասիրություններից
հայտնի է, որ բարձր կարգի բույսերը և միկրոօրգանիզմները
իրենց զարգացման ընթացքում սերտորեն կապված են միմյանց
հետ: Նրանց փոխազդեցովիյան շնորհիվ փոխվում է նաև հողի ֆի-
զիկո-քիմիական բնույթը և բարելավվում են հողակաղման պրո-
ցեսները, օդային, ջրային, ջերմային պայմանները և այլն, որոնք
իրենց հերթին բարերար ազդեցություն են գործում հողում զարգա-
ցող թե՛ բույսերի և թե՛ միկրոօրգանիզմների բիոլոգիական պրո-
ցեսների վրա: Բույսերի և միկրոօրգանիզմների այս նույն փոխազդ-
ման դրական երևույթը նկատվում է նաև հողագրունտներում: Այն
հողագրունտներում, որտեղ աճում են թիթեռնածաղկավոր բույսեր,
ինչպես և սրանց հետ՝ հացազգի խոտեր, նեխման բակտերիաների
քանակը մեծանում է և ամռնիֆիկացիայի պրոցեսն էլ ինտենսի-
վանում է (տե՛ս աղ. 9 և 10):

Բերված աղյուսակների թվերից երևում է, որ բույսերի
քանակի ավելացման ու նրանց փարթամ աճեցողության զուգըն-
թաց ավելանում է նեխման բակտերիաների ընդհանուր քանակը և
ինտենսիվանում է ամռնիֆիկացիայի պրոցեսը, ընդ որում բնակա-
նութեան տարածված երեքնուկի և հացազգի բույսերի խառնուրդն

Դիագրամնա

ՆԵԽՄԱՆ ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԻ ՔԱՂԱԿԻ ԵՎ
ՊԵՂՏՈՆԻ ԱՄՈՒՖԻԿԱՑՄԱՆ ՀԱՄԵՐԱՏԱԿԱՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶՈԼԱԳՐՈՒՄՆՈՒՄ



■ Նեխման բակտերիաներ
2 զ-ում միլիլիտրով

■ ամբողջ
վզ-ներով

Աղյուսակ 9

Բուսականության ազդեցությունը նեխման բակտերիաների ընդհանուր
քանակի վրա (1 գ հողագրունտում) միլիոններով)

Բուսականությունը	1948 թ.		1949 թ.		1950 թ.	
	ամռա- նը	աշնա- նը	ամռա- նը	աշնա- նը	ամռա- նը	աշնա- նը
Առանց բուսականության	3,06	1,02	6,42	2,96	0,85	2,20
Գարնան ացան ցորեն	1,09	3,41	3,98	1,50	2,41	0,98
Ճահճային բուսականություն	1,94	4,33	8,56	7,22	8,61	11,72
Երեքնուկի և հացազգի խոտերի խառնուրդ	7,54	8,88	10,63	7,28	8,86	12,96

Աղյուսակ 10

Բուսականության ազդեցությունը ամռնիֆիկացիայի ինսենսիվության
վրա (հողագրունտում 1 գ պեղածոնի քայլայումից առաջացած
ամիսկը մզ-ներով)

Բուսականությունը	1948 թ.		1949 թ.		1950 թ.	
	ամռա- նը	աշնա- նը	ամռա- նը	աշնա- նը	ամռա- նը	աշնա- նը
Առանց բուսականության	50,56	107,70	91,30	95,90	96,90	92,00
Գարնան ացան ցորեն	55,10	62,67	85,50	97,40	94,29	108,80
Ճահճային բուսականություն	76,43	121,35	103,30	102,30	112,37	108,80
Երեքնուկի և հացազգի խոտերի խառնուրդ	85,15	134,13	105,90	103,50	103,34	106,70

ավելի քարերար ազդեցություն է գործում նեխման բակտերիաների
և սրանց կենսագործումներության վրա, իսկ ավելի խոնավ տեղերում
դրական ազդեցություն է թողնում նաև ճահճային բուսականու-
թյունը: Հողագրունտներում տարբեր կոմքին ացիաներով ցանված
խոտախառնուրդների ազդեցությունն ամռնիֆիկացիայի պրոցեսի
վրա պարզելու նպատակով, 1951 թ. մինք ուսումնասիրեցինք
Կարճադրյուր գյուղի հողագրունտներում Պ. Ն. Հակոբյանի (1951)
կողմից դրված փորձերում խոտախառնուրդների տակ ընթացող
միկրոբիոլոգիական պրոցեսների ընթացքը: Ուսումնասիրությու-
նից պարզվեց, որ խոտախառնուրդներով զբաղեցված հողա-
գրունտներում նեխման բակտերիաների կենսագործումներումը
(ամռնիֆիկացիան) շատ ավելի ինտենսիվ է վնասնում, քան
նույնիսկ 6—7 տարի առաջ ազատված, խոտախառնուրդնե-

րով պրաղեցված հողագրումտներում: Այս կապակցությամբ ստացված տվյալները բերված են աղյուսակ 11-ում:

Եթե աղյուսակում բերված տվյալները համեմատենք 1944 թ. աղատված, խոտախառնուրդ շցանած հողագրումտներում ամռնիֆիկացիայի ընթացքին վերաբերող տվյալների հետ, ապա կտեսնենք, որ նրանց միջև խոչոր տարբերություն կա: Այսպես, օրինակ, եթե Յամագաբերդ գյուղի 1944 թ. աղատված միջին կմախսքային, ավագային հողագրումտում 1 գ պեպտոնի ամռնիֆիկացիայից առաջացած ամիսակը 1950 թ. ամռանը կազմում էր 110,57 մգ, աշնանը՝ 107,10 մգ, Լճաշեն գյուղի նույն տարում աղատված թույլ կմախսքային, փոփոք ավագային հողագրումտում համապատասխանաբար կազմում է 108,75 մգ և 110,50 մգ, Գեղարքունի գյուղի նույն տիպի և նույն տարում աղատված հողագրումտում՝ 99,3 մգ և 108 մգ, Զոլաբար գյուղի հողագրումտում՝ 103,34 մգ և 103,70

Այսու սակ 11

Խոտախառնուրդների աղդեցությունը ամռնիֆիկացիայի հնատենության վրա (1 գ պեպտոնի քայլայումից առաջացած ամիսակը մգ-ներով)

Խոտախառնուրդների կազմը	1951 թ.	
	ամռանը	աշնանը
Կարմիր երեքնուկ + ախմոֆենկա + մարդագետ - նային շյուղախոս	109, 13	119,95
Առվույտ + ախմոֆենկա + մարդագետանային շյուղ զախոռ	129, 50	141, 81
Կարմիր երեքնուկ + բազմանար սայդրաս	112, 95	120, 22
Երեքնուկ	104, 24	110, 64
Ժիտնյակ + անքիստ կաստյոր + բազմահար սայդրաս	133, 09	139, 90
Կորնզան + ախմոֆենկա	133, 58	175, 75
Կորնզան + ախմոֆենկա + անքիստ կաստյոր	91, 34	126, 69
Կորնզան	89, 34	127, 55

մգ, ապա Կարմաղբյուր գյուղի առավլուտի, տիմոֆենկայի և մարդագետնային շյուղախոտի խառնուրդով զրաղեցված հողագրումտում զրից աղատվելու 4-րդ տարում և ցանքի 3-րդ տարում այն կազմում էր ամռանը 129,50 մգ, աշնանը՝ 141,81 մգ, ժիտնյակի, կաստյորի և բազմահար սայդրասի խոտախառնուրդներով զրաղեցված հողագրումտներում համապատասխանաբար այն կազմում էր 133 մգ և 139 մգ, իսկ կորնզանի և տիմոֆենկայի խոտախառնուրդներով զրաղեցված հողագրումտներում՝ 133,58 մգ և 175,75 մգ: Եթե

Հողագրումտներում մշակվող խոտախառնուրդները բարերար աղղեցություն են գործում միկրոօրգանիզմների քանակի և նրանց կենսագործումներության խոտենսիվության վրա, ապա միկրոօրգանիզմներն էլ, իրենց կենսագործումներության ընթացքում հողագրումտներում քայլայելով ու հանքայնացնելով օրգանական նյութերը, նպաստում են ցանված խոտախառնուրդների բերքատվության բարձրացմանը, որ երևում է Պ. Ն. Հակոբյանի (1951) ցանած խոտախառնուրդների բերքի տվյալներից: Խոտախառնուրդների և միկրոօրգանիզմների կենսագործումներության այդպիսի փոխազդման շնորհիվ տարեցտարի լավանում են հողագրումտների ֆիզիկո-քիմիական հատկանիշները, արագանում են հողակազմման պրոցեսները, որի հետևանքով բարձրանում են նրանց ազրունումիական հատկությունները:

Սևանա լճի ջրից ազատված հողագրումտներում զարգացող ամոնիֆիկատորներին վերաբերող, վերը բերված տվյալներն ի մի ամփոփելով, կարելի է անել հետևյալ ընդհանուր եղանակացությունները՝

1. Սևանա լճի ջրից մինչև այժմ ազատված հողագրումտները, հիմնականում, հանդիսանում են թույլ, միջին և ուժեղ կմախքային, ավազային և փոփոք ավազային նստվածքներ:

2. Այդ հողագրումտներում ընթացող բիոլոգիական պրոցեսների փոփոխման ընթացքը կախված է հողագրումտների առանձնահատկություններից, նրանց ֆիզիկո-քիմիական կազմից, խոնավության աստիճանից, շերմային ռեժիմից և այլն:

3. Թույլ, միջին և ուժեղ կմախքային, ավազային և փոփոք ավազային հողագրումտներում միկրոօրգանիզմների քանակը տարեցտարի ավելանում է և դրան զուգընթաց ուժեղանում են միկրոբիոլոգիական պրոցեսները, որոնց հետևանքով լճի մերձափնյա հողագրումտներն աստիճանաբար հարստանում են հումուսով և ազոտային այլ սննդանյութերով:

4. Այն հողագրումտներում, որտեղ բուսերը փարթամ են աճում և ազոտ պարունակող օրգանական նյութեր շատ են կոտակում (8ամաքաբերդ և Զոլաքար գյուղերի հողագրումտներ), նեխման բակտերիաների քանակը մեծ է և հետագա տարիների ընթացքում էլ աստիճանաբար ավելանում է: Ընդհակառակը, այն հողագրումտներում, որտեղ բուսերը քիչ են, թույլ աճ ունեն և ազոտ պարունակող օրգանական նյութերն էլ քիչ են կոտակվում (Լճաշեն, Գեղարքունի և ն. Ալուշալու գյուղերի հողագրումտներ), նեխ-

ման բակտերիաների քանակը փոքր է և հետագա տարիներում նրանց քանակական փոփոխություններն էլ անշան են:

5. Հողագրումաներում նեխման բակտերիաների մորֆոլոգիական հատկանիշները միջավայրի արտաքին պայմանների փոփոխմանը զուգընթաց ենթարկվում են ձևափոխությունների և աստիճանաբար բարձրանում է նրանց կենսումակությունը:

6. Հողագրումաներում ընթացող ամոնիֆիկացիայի պրոցեսը մեծապես կախված է այդ պրոցեսը հարուցող միկրոօրգանիզմների քանակից, նրանց կենսագործունեության ակտիվությունից, աղոտային և զանազան ածխածնային նյութերի առկայությունից ու նրանց քանակական հարաբերությունից, բուսականության տարածվածության աստիճանից և այլն:

7. Ընդհանրապես ավելի վաղ (1944) աղատված հողագրումանում ամոնիֆիկացիայի պրոցեսն ավելի ինտենսիվ է ընթանում, քան ուշ (1948) աղատված հողագրումաներում:

Այդ պրոցեսը ենթարկվում է նաև սեղոնային փոփոխությունների. աշնանը և մասամբ էլ գարնանը բավարար քանակությամբ օրգանական նյութերի առկայության շնորհիվ ամոնիֆիկացիան ավելի ուժեղ է ընթանում, քան ամռան սեղոններին: Հողագրումաներում, միջավայրի արտաքին պայմանների բարելավման շնորհիվ, տարեցտարի բարձրանում է ամոնիֆիկացիայի ինտենսիվությունը:

8. Թիթեռնածաղկավոր և հացաղգի խոտախառնուրդներով զրաղեցված հողագրումաներում նեխման բակտերիաների քանակը համեմատաբար մեծ է: Այստեղ, նրանց կենսագործունեության ինտենսիվության համար բավարար պայմանների առկայության շնորհիվ, ամոնիֆիկացիան էլ ավելի ինտենսիվ է ընթանում, քան բուսականությունից զուրկ կամ միմիայն հացաղգի բույսերով զրաղեցված հողագրումաներում:

Գ ր ա կ ա ն ու ր յ ու ն

Լիսենկո Տ., 1950, Ագրորիոգիա, Երևան:

Հակոբյան Պ. Ն., 1951, Սևանա լճի ջրերից աղատված հողագրումաներում բաղմամյա խոտաբույսերի մշակման հնարավորության մասին (ձեռագիր): Փանոսյան Հ. Կ., 1947, Հողի միկրօրիոլոգիական պրոցեսների ուսումնասիրության մեթոդների մասին: ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր (ընական գիտությ.), № 10, էջ 3:

- Փանովան Հ. Վ., Մեջքարյան Ա. Ա., 1940, ՀՍԽՀ Համարլուկ Հրաժար հողերի
միկրոբուզիական բնութագրութեա: Труды Н.-И. станции полеводства,
вып. I, стр. 154.
- Փանովան Հ. Վ., Մինասյան Ա. Ի., Թակայան Ե. Ս. և Հայուրյանյան Ռ. Ե.,
1951. Ցանքացանապության մեջ մտնող մի քանի բույսերի և հողի
միկրօրային բնակչության փոխազդեցության հարցեր շուրջը: ՀՍԽՀ ԳԱ
Միկրոբուզիական ժողովածու, պրակ 6, էջ 3:
- Березова Е. Ф. и Ремпе Е. Х. 1951. Микрофлора корневой системы рас-
тений и методика ее изучения. Труды Всесоюзн. ин-та сельхоз.
микробиологии, том XII, стр. 39.
- Береснева В. Н. и Чемоданова, Е. В. 1951. Микрофлора, разлагающая
растительные остатки с образованием перегноя и ее значение
для корневого питания растений. Труды Всесоюзн. ин-та сельхоз.
микробиологии, том XII, стр. 6.
- Бошьян Г. М. 1950. О природе вирусов и микробов. Медгиз. Москва.
- Вильямс В. Р. 1949. Почвоведение. Сельхозгиз. Москва.
- Вильямс В. Р. 1951. Собрание сочинений, том VII. Москва.
- Демиденко Т. Т. 1929. Из области питания и обмена веществ у выс-
ших растений. Сборник работ, посвященный памяти Н. Н. Худя-
кова. Москва.
- Доросинский Л. М. 1951. Роль микроорганизмов в корневом питании
растений. Труды Всесоюзн. ин-та сельхоз. микробиологии, том XII,
стр. 17.
- Имшенецкий А. А. 1940. Строение бактерий. Москва.
- Исаакова А. А. 1934. К вопросу о взаимоотношениях между высшими
растениями и микроорганизмами. Известия Акад. наук СССР, том
7, стр. 993.
- Исаакова А. А. 1940. Об отборе корнями растений специфичной микро-
флоры. Тр. И. Ф. Р. Академии наук СССР, т. III.
- Красильников Н. А. 1940. Микрофлора ризосферы и ее влияние на рост
и урожай растений. Химизация социалистического земле-
делия, № 9.
- Красильников Н. А. 1944. Бактериальная масса ризосферы растений,
Микробиология, том XIII, стр. 144.
- Красильников Н. А., Крисс А. Е. и Литвинова М. А. 1936. Микробио-
логическая характеристика ризосферы культурных растений.
Микробиология, том V, вып. I, стр. 87.
- Мишустин Е. Н. 1947. Эколого-географическая изменчивость почвенных
бактерий. Изд. АН. СССР.
- Мишустин Е. Н. и Пушкинская О. И. 1942. Роль микробиологического
фактора в образовании почвенной структуры, Микробиология,
том XI, стр. 92.
- Омелянский В. Л. 1914. Фиксация атмосферного азота в условиях
смешанной культуры. Архив биологич. наук, том. 18, стр. 309.)
- Омелянский, В. Л. 1915. К физиологии и биологии азотофиксирующих
бактерий. Архив биологич. наук, том 19, стр. 213.

- Паносян А. К. 1944. Новый метод определения интенсивности процесса аммонификации. ДАН Арм. ССР, том I, вып. 3, стр. 27.
- Паносян, А. К. и Киракосян А. В. 1951. Аммонифицирующие бактерии и процесс аммонификации в солончаках. Микробиологич. сборник АН Арм. ССР, вып. VI, стр. 51.
- Петросян А. П., Киракосян А. В., Мирзабекян Р. И. и Меграбян А. А., 1940, Микробиологическая характеристика почв Октябрьянского, Сталинского (Нахич. Автоном. ССР) и Ленинаканского районов. Труды Н.-И. станции полеводства, вып. 1, стр.142.
- Рудаков К. И. 1951. Микроорганизмы и структура почвы, Москва.
- Федоров М. В. 1948. Биологическая фиксация азота отмосферы, Москва.

А. И. Минасян

Гнилостные бактерии в обнаженных почвогрунтах озера Севан

Р е з ю м е

При изучении хода развития общего количества микроорганизмов и микробиологических процессов в обнаженных изпод вод озера Севан почвогрунтах, мы обратили особое внимание на определение аммонификаторов и процесса аммонификации, что является очень важным показателем для характеристики хода микробиологических процессов и организации освоения этих почвогрунтов.

Данные исследования, приведенные в основном тексте настоящей работы (табл. 1—11), дают нам основание прийти к следующему заключению:

1. Почвогрунты, обнаженные в результате практического осуществления проблемы комплексного использования вековых запасов вод озера Севан и ее постоянного стока, в основном представляют слабо, средне и сильно скелетные песчаные и рыхло песчаные отложения.

2. Ход изменений биологических процессов, происходящих в этих почвогрунтах, зависит от особенностей почвогрунтов, их физико-химического состава, степени влажности, термического режима и т. д.

3. В слабо, средне и сильно скелетных песчаных и рыхло песчаных почвогрунтах количество микроорганизмов вообще увеличивается из года в год и параллельно с этим усиливаются

микробиологические процессы, вследствие чего прибрежные почвогрунты постепенно обогащаются азотистыми и другими питательными веществами.

4. В почвогрунтах, где растения растут пышно и в них накапливается много азотистых органических веществ (почвогрунты сс. Цамакаберт и Золакар), содержится большое количество гнилостных бактерий, увеличивающееся в последующие годы. Наоборот, в тех почвогрунтах, где растительность ограничена, развитие ее происходит слабо, и мало накапливается азотистых органических веществ (почвогрунты сс. Лчашен, Гегаркуни и Н. Алучалу), количество гнилостных бактерий низкое, и в последующие годы их количественное изменение незначительно.

5. Морфологические особенности гнилостных бактерий в почвогрунтах, параллельно с изменением внешних условий среды, подвергаются определенным изменениям и их жизнедеятельность постепенно усиливается.

6. Процесс аммонификации в почвогрунтах, освобожденных из-под вод оз. Севан, преимущественно зависит от количества микроорганизмов, вызывающих этот процесс, их жизнеспособности, наличия азотистых и безазотистых органических веществ, их количественного соотношения, степени распространения растительности и т. д.

7. Вообще в почвогрунтах, освобожденных в более ранний период (1944 г.), процесс аммонификации проходит более интенсивно, чем в почвогрунтах, освобожденных позже (1948 г.).

Процесс этот подвергается также сезонным изменениям: осенью, и отчасти весной, при наличии достаточного количества органических веществ, аммонификация проходит более интенсивно, чем в летнем сезоне. Благодаря улучшению внешних условий среды в почвогрунтах из года в год повышается интенсивность аммонификации.

8. В почвогрунтах, занятых травосмесями бобовых и злаковых растений, количество гнилостных бактерий сравнительно больше. Здесь, при наличии благоприятных условий для их жизнедеятельности, аммонификация проходит более интенсивно, чем в лишенных растительности, или занятых только злаковыми растениями почвогрунтах.